ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-4-Ը ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ (Ք. ԱՇԳԱԲԱԴ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Թուրքմենստան, ք. Աշգաբադ, 2024թ. հոկտեմբերի 2-4-ը:

4. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողովի միջազգային գործընկերություն և Թուրքմենստանի Նախարարների կաբինետի ներքո Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գործակալություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու 2024թ. հոկտեմբերի 3-ին կայանալիք ԵՄ-Կենտրոնական Ասիա փոխկապակցվածության ներդրողների ֆորումի շրջանակներում ձևավորված Համակարգման պլատֆորմի բարձր մակարդակի հանդիպմանը (ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցություն ապահովելը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում Նախարարության շահերը ներկայացնելը):

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը քննարկվել են Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքին, դրա համակարգման հարթակին վերաբող հարցեր, ներակայացվել են միջանցքին հնարավոր մասնակից երկրների ենթակառուցվածքներին վերաբերող հարցեր:

Ներկայացվել է նաև ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Թուրքմենստանի Նախարարների կաբինետի ներքո Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրեն Մամեթխան Չակիևի հետ: Քննարկվել են Հայաստանի և Թուրքմենստանի միջև օդային հաղորդակցության հարցը, ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման համար երկու երկրների միջև փոխանակվող թույլտվությունների ավելացման հարցը, ինչպես նաև Հայաստանի տնտեսվարողների համար Թուրքմենստանի կողից ավելի ցածր սակագներ կիրառելու հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համակարգման պլատֆորմի բարձր մակարդակի հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրեն Մամեթխան Չակիևի հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել ուսումնասիրել երկու երկրների միջև օդային հաղորդակցության և Թուրքմենստանի կողից ավելի ցածր սակագներ կիրառելու հարցերը, ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման համար երկու երկրների միջև փոխանակվող թույլտվությունների քանակի ավելացման և այլ հարցերով երկու երկրների կառավարությունների միջև կնքված միջպետական համաձայնագրով նախատեսված Խառը հանձնաժողովի նիստ անցկացնել, ինչպես նաև թուրքմենական կողմը պատրաստակամություն է հայտնել ավելացնել վերոնշյալ թույլտվությունների քանակը մինչև Խառը հանձնաժողովի նիստ անցկացնելը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով ԵՄ Global Gateway հարթակում ներգրավման և Կենտրոնական Ասիայի երկրների հետ համագործակցությունը խթանելու, ԵՄ կողմի ֆինանսավորվող նախագծերից դուրս չմնալու կարևորությունը, ինչպես նաև տարեսկզբին Բրյուսելում տեղի ունեցած ԵՄ-Կենտրոնական Ասիա Փոխկապակցվածության ներդրողների ֆորումի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները, անհրաժեշտ է շարունակել մասնակցությունը ԵՄ Global Gateway հարթակի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.10.2024թ.